Ղարաբաղու մելիքների հետ, ինչպէս վերջին դարու պատմութիւնը ցոյց է տալիս։

Եթէ Աղուանից թագաւորաց և իշխանաց անուանց կարգը և թուականը ճշդութեամբ չէ պահուած, այդ պատմագրերի սխալն է, որ թուականի կարգով չեն գրել պատմութիւնը, մանաւանդ Մովսէս Կաղանկատուացին, որ միեւնոյն թագաւորի և իշխանի անունը քանի քանիցս անգամ կրկնել է, այնպէս՝ որ չէ իմացւում թէ գրածը ո՞ր մարդու համար է։

Ցոյս ունիմ որ յարգոյ վարժապետները, որոց անունով է հրաւէրս (յառաջաբանի փոխարէն), կ'աշխատեն կարգի դնելով այս և միւս սխալները՝ ուղղել, և թերութիւնքը լրացնել քննադատութեան միջոցաւ, որպէս ընդհանուր սովորութիւն է։

Ըստ որում Աղուանից թագաւորութիւնն, ինչպէս պատմութիւնը ցոյց է տալի, անցաւ Հայաստանի Սիւնիք և Գուգարք նահանգները և՝ իբրեւ Աղուանից թագաւորութեան շարունակութիւն՝ հաստատուեցաւ երբեմն Լօռուայ բերդումն Կիւրիկեան թագաւորութիւն անուամբ, և երբեմն Սիւնեաց Բաղաբերդում՝ Բաղաց կամ Կապանի թագաւորութիւն անուամբ. մանաւանդ թէ Աղուանից և Սիւնեաց նահապետութիւնքն մի և նոյն Սիսակ նահապետից են յառաջացել. ուստի և հարկ համարեցի Սիւնեաց նահապետաց, թագաւորաց և իշխանաց անունց ցուցակը եւս արտագրել այս տեղ, Հ. Ղեւոնդ վարդապետ Ալիշանի «Սիսական-Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի» հարուստ և պատուական գրքիցը (1893. Վենետիկ, յերես 17)։ Այս ցուցակից և Օրբէլեան պատմագրից երեւում է, որ Փիլիպպէ իշխանից և նորա որդի Ատներսէհից (750) սկսած՝ իշխանքն Աղուանից փոխադրուած են ի Սիւնիք, ինչպէս և Հ. Ալիշանը Սիսականի մէջ գրում է յերես 14՝ «Նոր Նահապետք և թագաւորք Սիւնեաց» և սկսում է Ատներսէհից։

Ահա ցուցակը.